

Հայ գրականություն, Պատմվածք, Արձակ

16+

Մկրտիչ Արմեն

ԵՐԳ ԱՎՏՈՍՈՐԲԻԼԱՅԻՆ ՊԱՅԵՍԱՄԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Եղբորս՝ Արտաշեսին

1

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ես ծառայում էի Հյուսիսային ռազմաճակատին մերձակա մի փոքրիկ ավանում, ավելի ճիշտ՝ ոչ թե բուն ավանում, այլ ավանին մոտիկ անտառում: Ինձ հանձնարարել էին ավտոմոբիլային պահեստամասերի պահեստը, որի շենքը, խնամքով քողարկված, միայնակ կանգնած էր դարավոր անտառի լռության մեջ:

Ինչ կա գրողի համար ավելի ձանձրալի, քան այդ աշխատանքը, այնպես չէ՞: Հեռու մարդկանցից, մեն-մենակ, շրջապատված ավտոմոբիլային դետալներով, նստել ամբողջ օրը և սպասել, թե՛ երբ պիտի գա որևէ շոֆեր՝ ֆակտուրան ձեռքին, տանելու համար պահեստամասերից որևէ մեկը՝ փոխարինելու իր մեքենայի մաշվածը, կոտրվածը, գնդակոծությունից փչացածը. . .

Պահեստը փայտյա մի մեծ շենք էր՝ երկար և բարձր: Չգիտես ինչու, նա ոչ մի լուսամուտ չուներ և իր լույսն ստանում էր միայն դռնից, որը, ճիշտն ասած, դուռ չէր, այլ երկփեղկանի մեծ դարպաս՝ պահեստի նեղ պատի վրա: Երբ ես փակում էի դարպասը, ներսում տիրում էր լիակատար մթություն:

Ներսում, դարպասի աջ կողմում, հենց դրա կողքին, իմ «գրասենյակն» էր, որը տախտակյա շատ փոքրիկ մի տնակ էր պահեստի մթության մեջ դրված: Այնտեղ հագիվ էր տեղավորվել մի գրասեղան, մի աթոռ մի թախտ, որի վրա էլ հենց քնում էի: Իմ գրասեղանի վերևում կար մի փոքրիկ լուսամուտ դեպի դուրս, որտեղից ես ստանում էի իմ լույսը: Մութն ընկնելուց հետո այդ լուսամուտը նմանվում էր փոքրիկ պահարանի՝ գրասեղանիս վրա կախված: Թվում էր, որ եթե բաց անեմ այն, ես այնտեղ պիտի տեսնեմ առաջին օգնության դեղեր, վիրակապեր, բամբակ:

Մի փոքրիկ լուսամուտ էլ բացվում էր իմ գրասենյակից դեպի պահեստի խորքը: Երբ բաց դարպասից լույսը թափանցում էր պահեստ, ես իմ լուսամուտից կարող էի տեսնել մաքուր ռանդած և չներկված դարակների շարքերը, որոնք գնում էին պահեստի խորքը և խավարի մեջ կորչում: Խավարի մեջ կորչում էին նաև դարակների վերին հարկերը:

Իմ գրասենյակի դուռը բացվում էր դեպի դարպասը:

Երբեմն, երբ նստած էի լինում գրասեղանի մոտ, ինձ թվում էր, թե ես երբեմնի սկսնակ գրողն եմ և դա իմ երբեմնի փոքրիկ սենյակն է, որտեղ ապրել էի բավական երկար: Նույն անպաճույճ կահավորությունը, նույն թախտը՝ հասարակ անկողնով, գրքերի նույն կույտերը՝ գրասեղանի երկու ծայրերում դարսված: Բայց այժմ, բանաստեղծությունների հատորների փոխարեն, դրանք ավտոմոբիլային պահեստամասերի յուղոտված պրեյսկուրանտներ էին: Ցերեկը լուսամուտից թափանցող արևի լույսով, իսկ երեկոյան՝ իմ ցածրիկ առաստաղից կախված էլեկտրական լամպի տակ, ես իզուր էի նորից-նոր թերթում դրանք՝ գտնելու համար որևէ գեղարվեստական խոսք: Չոր, որոշակի, մաթեմատիկորեն ճշգրիտ, դրանք խոսում էին միայն դետալների մասին: Հենց այդտեղ էլ նկարված էին դետալները՝ իրենց անվերջանալի համարներով, շատ հաճախ անհասկանալի անուններով. . . Ես բարեխղճորեն ուսումնասիրում էի դրանք՝ մի դետալի փոխարեն մի ուրիշը բաց չթողնելու համար:

Ես չէի ճանաչում ավտոմոբիլն իր շարժման մեջ: Իմ կյանքում ես ոչ ղեկ էի բռնել, ոչ էլ, ասենք թե, ավտոսիրողների խմբակում մեքենաների կազմությունն ուսումնասիրել: Ուստի և դետալներից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը ես չգիտեի, ինձ անծանոթ էին դրանց ներքին կապերն ու փոխհարաբերությունները, դրանք ինձ համար ոչ թե ամբողջական օրգանիզմի մասեր էին, այլ

մեռած բեկորներ: Օրենքականությունն ուսումնասիրելիս ես անդադար հորանջում էի և երբեմն էլ՝ ուղղակի քնում:

Բայց ես քիչ էի լինում իմ գրասենյակում: Այնտեղ չկար ոչինչ հետաքրքիր: Դուրս գալով պահեստ, ես ցանկանում էի գոնե այնտեղ գտնել իմ հետաքրքրությունը: Բայց այնտեղ նույնպես ոչինչ չկար, որ զբաղեցներ իմ միտքը և մանավանդ՝ սիրտը. . .

Պահեստի առաջին մի քառորդն ազատ էր դարակներից: Այնտեղ, գետնի վրա, դրված էին ավտոմոբիլների ամենափոքր մասերը՝ շրջանակներ, անիվներ, դռներ, կաբինաներ, նստատեղեր. . . Յենց այնտեղ էլ պահեստի ծախ անկյունում, տակառներով դրված էր բենզինի անձեռնմխելի մի փոքրիկ պաշար:

Դարակները գնում հասնում էին մինչև խորքի պատը: Դարակների միջով անցնում էին երկու նեղ միջանցքներ: Նույնիսկ ցերեկը, նույնիսկ դարպասի բաց ժամանակ պահեստի խորքում խավար էր: Ես այնտեղ գնում էի կոթավոր էլեկտրական լամպը ձեռքիս: Լամպի հաղորդալարը ձգվում էր իմ գրասենյակից: Տեղափոխելով երկար սանդուղքը, ես բարձրանում էի դեպի դարակների վերին հարկերը, արեյակուրանտը դնում էի տախտակի վրա, մի ձեռքով թերթում էի այն, մյուս ձեռքով մոտեցնում լամպը և համեմատելով դետալը նկարի հետ, վերցնում էի և իջնում վար:

Պահեստի առաստաղը տափակ չէր: Վերին դարակներից բարձր՝ շենքի երկթեք ծածկն էր, որի տակ երկար տարածված էր եռանկյուն մթնոլորտը՝ ձմեռը ցուրտ, իսկ ամառը՝ հեղձուցիչ տաք: Մի թռչուն, ես մինչև վերջ էլ չտեսա, թե ինչ թռչուն էր դա, բույն էր դրել այնտեղ: Սովորաբար նա զգացնել չէր տալիս իր գոյությունը, բայց այդ թռչուններին, անձնագոհաբար լույսից, սկսում էր տազնապահար սլանալ պահեստով ետ ու առաջ՝ երբեմն քիչ շրշունով քսելով դարակների փայտերին: Մի անգամ նա նույնիսկ կապվ իրար վրա սյունածև դարսված ինչ-որ փոքրիկ դետալների, որոնք զրնգոցով թափվեցին ցեմենտե հատակին: Եվ միայն մի անգամ, մի կարճ վայրկյանով, նրա թևի ծայրն ընկավ էլեկտրական լույսի դաշտի մեջ, և ես նկատեցի, որ դա սպիտակ էր: Իսկ թե ի՞նչ գույնի էր ինքն ամբողջովին՝ չգիտեմ:

Ինչո՞վ էր ապրում թռչունն այդտեղ. . . Ըստ երևույթին, ծածկի որևէ անկյունում կար անցք, որով նա ներս ու դուրս էր անում: Բայց ես չկարողացա գտնել նաև այդ անցքը. ոչ մի տեղից ցերեկվա լույսը ներս չէր թափանցում՝ բացի դարպասից:

Պահեստում ևս չգտնելով որևէ հետաքրքիր բան, ես դուրս էի գալիս շենքից և նստում դարպասի կողքին դրված հարմարավոր կոճղի վրա: Բաց էի անում բավական մեծ ուշացումով ստացվող լրագրերը և կարդում առաջին տառից մինչև վերջինը: Յուրաքանչյուր տողից շնչում էր ծանր, արյունոտ պատերազմը. . . Երկինքն ու երկիրը սասանում էին ռմբակոծություններից. . . Եվ այնքան տարօրինակ էր կարդալ այդ բոլորի մասին՝ անտառի բացարձակ լռության և խաղաղության մեջ. . .

Ավարտելով ընթերցումը, իսկ երբեմն նույնիսկ ընդհատելով, ես զարմացած նայում էի անտառին: Այնտեղ տիրում էր այնպիսի կանաչ անշարժություն, կարծես քարացել էր ամեն ինչ: Սոճիների հաստ և երկար բները կանգնել էին այնպես ուղղաձիգ, որ անհնար էր թվում դրանց որևէ շարժում: Դրանք, կարծես, ինչ-որ հեքիաթական պալատի սյուներ լինեին, որ իրենց վրա կրում էին կանաչ ծածկը: Սյուները մոտիկում թվում էին բավական ցանցառ, ապա հետզհետե ավելի և ավելի խիտ, իսկ անտառի խորքում դրանք իրար վրա գալով, կազմել էին այնպիսի խիտ պատ, որ դրանց միջև չկար ոչ մի արանք:

Երևի գեղեցիկ անտառ էր դա: Չգիտեմ: Ես չեմ սիրում վայրի բնությունը: Ես քաղաքապաշտ եմ: Կոճղի վրա նստած, ես երագում էի, թե ահա ուր որ է, իմ աջում կզգա տրամվայը և նրա կարմիր վագոնները կանցնեն ծառերի ետևով՝ ինչպես քաղաքային այգու մոտով: Իսկ երբ նայեմ ձախ, կտեսնեմ ասֆալտած ծառուղին՝ նստարաններով, իսկ երկու քայլ այն կողմ՝ փողոցն իր բազմահարկ շենքերով, մարդկանցով և ավտոմոբիլներով. . .

Բայց այդ բոլորը չկար: Ամայի անտառն ինձ համար ավելի ձանձրալի էր, քան ավտոմոբիլային պահեստամասերով լի պահեստը:

Ոչ, հագիվ թե կարելի լիներ հնարել գրողի համար ավելի անհրապույր և ձանձրալի աշխատանք, քան իմ աշխատանքն էր:

Մի անգամ, կեսգիշերին, ես արթնացա քնից և ըստ սովորության սկսեցի իսկույն ունկնդրել, թե ինչն արթնացրեց ինձ: Սակայն ռմբակոծություն չկար, չէր լսվում ո՛չ հրետանու ձայն և ո՛չ էլ նույնիսկ օդային տազնապ՝ մոտակա ավանից:

Լիակատար լռություն էր: Իմ փոքրիկ սենյակում թույլ լուսավորում էր էլեկտրական սակավաուժ լամպը: Լուսամուտի քողարկման կապույտ թուղթը մի պահ ինձ թվաց լուսաբաց, բայց այդ նմանությունն անմիջապես անհետացավ: Ես բոլորովին զգաստացա քնից:

Առաջին անգամը չէր, որ ես արթնանում էի գիշերով: Եվ եթե դա լինում էր առանց որևէ տհաճ պատճառի, այլ հենց այնպես, ապա ես աշխատում էի, նախ՝ նորից քնել, իսկ հետո, երբ դա չէր հաջողվում, մտածել որևէ հաճելի բանի մասին, օրինակ՝ հիշել անցյալը, երբ պատերազմ չկար, կամ պատկերացնել ապագան, երբ պատերազմ չէր լինելու:

Բայց այդ գիշեր, հակառակ իմ կամքի, ես սկսեցի մտածել ինձ հանձնարարված պահեստի մասին: Ոչ միայն հակառակ իմ կամքի, այլև, ես կասեի, հակառակ իմ գիտակցության: Եթե ես գիտակցեի, որ մտածում եմ պահեստի մասին, հեռու կիրեի այդ միտքն ինձանից, որովհետև դա ձանձրալի էր, պահեստում չկար ոչինչ հետաքրքիր: Բայց ես մտածում էի ինքնաբերաբար, ավելի ճիշտ՝ ոչ թե մտածում, այլ զգում էի պահեստը, զգում էի բազմաթիվ ու բազմաթիվ պահեստամասերի ներկայությունը՝ ինձանից երկու քայլ այն կողմ.. .

Պահեստամասերը հազարավոր տեսակի էին: Եվ չկային գոնե երկու իրար կցված դետալներ: Դրանցից յուրաքանչյուրն առանձին էր՝ ինչպես դուրս էր եկել հաստոցի վրայից կամ շտամպի տակից:

Դա անջատման, ջլատման գազաթնակետն էր: Լապտերները դարակների վրա դրված էին ոչ թե որպես ամբողջական լապտերներ, այլ անջատված էին դրանց և՛ ապակին, և՛ ապակու նիկելե շրջանակը, և՛ ռեֆլեկտորը, և՛ պատյանը, և՛ լամպիկը, և՛ հաղորդալարերը, և՛ պտուտամեխերը — ամեն, ամեն ինչ: Դրանք նույնիսկ դրված չէին իրար մոտ: Պտուտամեխերը գտնվում էին ավտոմոբիլի ուրիշ դետալների պտուտամեխերի կողքին՝ մի դարակի վրա, ապակին գտնվում էր ազդանշանային լապտերիկի կարմիր ապակու հետ միասին՝ մի այլ դարակի վրա և այլն.. .

Պահեստում կային ավտոմոբիլի բոլոր, բացարձակապես բոլոր մասերը: Դրանցից կարելի էր հիանալիորեն հավաքել ամբողջական ավտոներ, երկաթե տակառներից բենզին ցնել բաքերը, պահեստի կողքով անցնող փոքրիկ առվակից ջուր ցնել ռադիատորները և գործի գցել մեքենաները:

Բայց այդ մեքենաները մասնատված ընկած էին պահեստում որպես սառը և անկյանք պահեստամասեր: Նույնիսկ բենզինը, մեքենաներին կենդանություն տվող այդ արյունը, սառն էր և անկյանք իր երկաթե տակառներում.. .

Բայց ոչ, պահեստում ընկած էին ոչ թե ջլատված ավտոմոբիլներ, այլ ընդամենը՝ պահեստամասեր, որոնք պետք է սպասարկեին ավտոմոբիլներին: Պահեստը դեղատան նման մի բան էր, ավելի շուտ՝ պրոտեզարան: Այդտեղից կարելի էր ստանալ առողջ մասեր՝ փոխարինելու համար մեքենաների կուրացած աչքերը, ջարդված ոտքերը, պոկված թևերը, կտրատված զսպանակադիքները, նույնիսկ մոտոր-սիրտը.. .

Համաձայն պահանջվող յուրաքանչյուր պահեստամասի, ես կարողանում էի պատկերացնել, թե ինչ էր տեղի ունեցել տվյալ ավտոմոբիլի հետ՝ պատերազմական այդ պայմաններում: Իսկ համաձայն պահանջվող բոլոր պահեստամասերի՝ ես կարող էի եզրակացնել, թե ինչ էին անում դրսում ավտոմոբիլներն ընդհանրապես:

Ավտոմոբիլները դրսում գրոհում էին: Դրանցից շատերը, տանկերի, թնդանոթների և ռազմական այլ տեխնիկայի հետ միասին, գտնվում էին անմիջականորեն ռազմաճակատում, իսկ մյուսները ռեյսեր էին կատարում ավանի և առաջավոր գծի միջև՝ փոխադրելով ռազմամթերք:

Իմ հոգին լցվեց բուռն հպարտությամբ իմ աշխատանքի համար: Ես անտարբեր պահեստապետ չեի, ես պրովիզոր էի, ես սանիտար էի, ես վիրաբույժ էի: Եվ իզուր էի մինչ այդ զրպարտել ես ինձ՝ համարելով, թե պասսիվ սպասում եմ շոֆերներին, որոնք գալիս են ֆակտուրաներով՝ պահեստամասեր տանելու: Չէ՞ որ, կոթավոր լապտերը ձեռքիս, ես հաճախ էի անցնում դարակների միջանցքներով, լուսավորում էի դետալները և զննում, թե յուրը, չի՞ սրբվել դրանց վրայից, խոնավությունը չի՞ կպել դրանց, առնետները չե՞ն կրծել թղթե փաթեթները կամ կարտոնե տուփերը: Ցերեկները, շրջելով պահեստի չորս կողմը, ես ավելի խնամքով էի քողարկում շենքը եղևնիներից կտրած հսկայական ճյուղերի տակ: Շաբաթը մեկ ես բարձրանում էի կտուր և ստուգում, ուղղում նաև դրա քողարկումը:

Բացի այդ բոլորից, ես նաև հայիտում էի: Հայիտում էի համարյա անխտիր բոլոր շոֆերներին, որ նրանք խնամքով չեն վարվում իրենց մեքենաների հետ, չեն պահպանում դրանք վտանգից, գնդակոծությունից, և կարծում են, թե պահեստն անսպառ է, անսպառ է նաև իմ համբերությունը: Ես նախագգուշացնում էի նրանց, որ մյուս անգամ չեմ տա ոչ մի ծնկածն գլան և, իհարկե, չեմ տա ոչ մի կարբյուրատոր: Ավելի լավ է՝ դրանց ֆակտուրաներով չերևան աչքիս:

Չեմ կարծում, թե շոֆերները սիրեին ինձ: Մեկն ինձ անվանում էր «Գոբսեկ», մյուսն ասում էր, որ ավելի հեշտ է սեփական կրծքով պատնեշել ավտոմոբիլի ապակիները գնդակոծությունից, փշրվելուց, քան թե գալ պահեստ և խնդրել ինձանից նոր ապակի: Երրորդը պարզապես հայիտում էր ինձ, և ես լռում էի՝ զգալով, որ անկարող եմ մրցել նրա հետ այդ բնագավառում:

Ես նախատում էի շոֆերներին, բայց սիրտս կտրատվում էր, որովհետև առանց այդ էլ նրանց վիճակվել էր ծանր բաժին, առանց այդ էլ նրանք աչքի լույսի պես էին պահում իրենց մեքենաները: Իսկ երբ հաղթում էին նրանք իրենց մեքենայով՝ կատարելով ռազմամթերք փոխադրելու չափազանց վտանգավոր որևէ ռեյս, ապա նրանք կավիճով մի նոր աստղ էին ավելացնում իրենց մեքենայի կողի վրա: Այդ աստղին արժանի էր նրանց կուրծքը, բայց նրանք պատիվը վերագրում էին մեքենային: Նրանք ավտոմոբիլը, ձիու նմանությամբ, համարում էին իրենց ընկերը, պատերազմի դառնություններն իրենց հետ կիսող արարած... .

Կար շոֆերների մեջ մեկը, որի վրա ես չեի բարկանում, որի գալուն ես միշտ ուրախ էի: Ավելին, ես շատ կուզեայի, որ նա գար մի քիչ ավելի հաճախ, թեկուզև ամեն անգամ տանելու համար մեկական միսոցային օդ. այդ բարիքից շատ կար պահեստում, չեի ափսոսա:

Այդ շոֆերն աղջիկ էր: Ոչ, ոչ, չի կարելի նրա մասին ասել այդպիսի ընդհանուր ձևով՝ աղջիկ էր: Նա Ռոզան էր: Ուրիշ ոչ մի աղջիկ չէր կարող փոխարինել նրան: Գոնե ինձ համար:

Նա գալիս էր միշտ մաքուր ու կոկիկ հագնված՝ կարծես հենց նոր էր վերադարձել զորահանդեսից: Ներս էր մտնում ծիծաղով, զվարթ, համարյա անհոգ, մեկնում էր ֆակտուրան ինձ՝ միշտ արդեն ստորագրված, համոզված լինելով, որ ես չեմ սկսի նրան մերժել և հետը կռվել:

Նախքան ես կգնայի պահեստի խորքը՝ դետալը բերելու, մենք զրուցում էինք մի քիչ, և նա էպիզոդներ էր պատմում իր ընկեր շոֆերների, բայց ոչ երբեք իր կյանքից: Նա ինքն ուներ շքանշաններ, մեդալներ, բայց իր մասին չէր պատմում ոչինչ: Ըստ երևույթին, դա ոչ միայն այն համեստությունն էր, որը հատուկ է բոլոր լավ մարդկանց, այլև զուտ կանացի գիծ էր. նա չէր ուզում գովել իրեն՝ տղամարդու մոտ. թող տղամարդը գովեր նրան...

Ամեն անգամ, երբ Ռոզան դետալը վերցրած դուրս էր ուզում գալ պահեստից, ես վերջին բռնակն ասում էի նրան.

— Ռոզա... . Չգո՛ւյշ պահիր քեզ... . Եթե վնասեցիր՝ ես չեմ կարող բաց թողնել քեզ համար ոչ մի պահեստամաս... .

Նա ծիծաղելով խոստանում էր ինձ՝ շատ զգույշ լինել, շատ: Ես նայում էի նրան և թերահավատորեն հառաչում: Մյուս շոֆերները հաճախ էին պատմում ինձ Ռոզայի արտակարգ համարձակության և խիզախության մասին: Գուցե ես սխալվում էի՝ դրա մեջ տեսնելով նաև անզգուշություն, բայց թող ներվի դա ինձ, ես սիրում էի Ռոզային... .

Նա գիտեր այդ, թեև մեր միջև դեռ չէր փոխանակվել ոչ մի բառ այդ մասին: Անվստահությունը, ամաչկոտությունը կամ մի այլ այդպիսի բան չէր դրա պատճառը: Մեր սերը, որպես շատ գեղեցիկ

և նվիրական բան, մենք պահում էինք հաղթանակից հետո, որպեսզի դա լիներ լիակատար և որպեսզի շրջանակված լիներ ոչ թե թնդանոթների ծխով, այլ հրավառության լույսերով.. .
Հաղթանակի սպասումը մեզ համար նաև սիրո սպասում էր.. .

Մենք ափսոսում էինք մանրացնել մեր սերը թռուցիկ գրկախառնությունների, հապճեպ քնքշությունների մեջ: Ոչ թե ես, այլ իմ փոքրիկ սենյակն էր ամեն անգամ զգում Ռոզայի հոգատար ուշադրությունն իր վրա: Մինչդեռ ես, կոթավոր լապտերը ձեռքիս, գնում էի պահեստի խորքը՝ դետալը բերելու, նա մտնում էր իմ սենյակը: Նրա գնալուց հետո ես տեսնում էի իմ անկողինը հարդարված, գրքերը գրասեղանի վրա կանոնավոր դարսված, էլի կատարված ինչ-որ միկրոսկոպային փոփոխություններ, որոնցից ոչ մեկն առանձին-առանձին ես չէի նկատում, բայց որոնց շնորհիվ իմ գրասենյակ-ննջարանում ստացած էր լինում այնպիսի հաճոյավետություն, ինչպիսին ընդունակ են հաղորդելու բնակարանին միմիայն կանայք, միմիայն կանայք.. .

3

Անկողնում պառկած, կեսգիշերից համարյա մինչև լուսաբաց, ես մտածում էի պահեստի մասին: Ինչպե՞ս չէի նկատել մինչև հիմա: Չէ՞ որ ես գտնվում էի ամենահետաքրքիր մի աշխարհում.. .

Վերցրու ձեռքդ որևէ դետալ, օրինակ՝ արգելակի կոթառը: Ի՞նչ է դա: Զմահած ձևի ինչ-որ ծուռ երկայթ, բոլորովին հեռու՝ գեղեցիկ համարվելուց: Ոչ միայն գեղեցիկ դարձնելու, այլև գոնե կանոնավոր տեսք տալու համար նրան հարկավոր էր ուղղել այն կամ ծռել բոլորովին այլ կերպ: Կարելի էր, այո, եթե դա լիներ ինքնուրույն և ամբողջական առարկա: Բայց դա դետալ էր և դրա ձևը համաձայնեցված էր ուրիշ դետալների ձևի ու դերի հետ: Գիտնականների սերունդներ էին աշխատել՝ տալու համար այդ քմահաճ թվացող ձևը. այն չէր կարելի ո՛չ ուղղել մի միլիմետր, ո՛չ ծռել, չէր կարելի ո՛չ հաստացնել՝ թեկուզ չնչին չափով, ո՛չ բարակացնել:

Ռելե, կարտեր, ստարտեր, կարբյուրատոր, ակումուլյատոր, փոխանցման տուփ, դիֆերենցիայի տուփ, խլացուցիչ, օդափոխիչ, դինամո, մագնետո, ֆերադո՝ խառնիխուռն անցնում էին իմ աչքի առաջով: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր ֆունկցիան, դերը, պարտականությունն այն ամբողջական օրգանիզմի մեջ, որը կոչվում էր ավտոմոբիլ: Ինչպե՞ս կարող էի ես մինչև հիմա դրանք համարել սառը և անկյանք դետալներ, ինչպե՞ս կարող էի չնկատել դրանցից յուրաքանչյուրի մեջ ընդհանուր կյանքի մի-մի մասնիկը.. .

Հանկարծ իմ մեջ անզուսպ ցանկություն առաջացավ վեր կենալ իսկույն, գնալ-տեսնել դետալները: Առաջին անգամ իմ աշխատանքի ողջ ընթացքում ես ուզում էի նայել դրանց ո՛չ թե պահեստապետի հոգատար հայացքով, այլ գրողի հոգու աչքերով:

Ես վեր կացա անկողնից, վերցրի գրասեղանի վրայից կոթավոր լամպը, որի կոթի վրա հաստ փաթաթված էր երկար, սև հաղորդալարը: Միացրի շտեպսելը և դուրս ելա լամպը ձեռքիս՝ ճանապարհին հաղորդալարն արձակելով կոթի վրայից:

Պահեստը մութն էր, ցուրտ: Լամպն ուժեղ լուսավորում էր իմ քթի առջև և զգալի տաքություն էր փչում երեսիս: Սպիտակեղենով, ցեմենտե սառը հատակի վրա ոտաբոբիկ, ես անցա դարակների միջանցքներից մեկով՝ կարծես կատարելով իմ գործի գիշերային ստուգատես:

Ես հերթով լուսավորում էի կանոնավոր շարված մեծ ու փոքր զսպանակներ, մեջդիրներ, շայբաներ, շարնիրներ, ֆլանեցներ: Ես այժմ հստակ տեսնում էի, որ կենդանի ավտոմոբիլի կենդանի մասեր էին դրանք:

Բայց այդ չէր ամենակարևորը: Եթե տեսնեի միայն այդքանը, չէի ուրախանա այնպես, ինչպես այժմ: Ես տեսնում էի, որ այդ դետալները ոչ թե իրարից տարբեր մարմինների կենդանի մասեր էին, այլ հազարավոր և հազարավոր միանման մարմինների, մի քանի տեսակի մեքենաների: Բացարձակապես նույն չափի ու ձևի դետալը կարող էր փոխարինել աշխատանքի մեջ մաշված կամ կռվի մեջ ջարդված մի ուրիշ նույնպիսի դետալի: Ավտոմոբիլների բուժման, նրանց անմահության աղբյուրը նրանց ստանդարտ լինելն էր.. .

Այդ գիշեր ես իմ հոգու խորքից շնորհակալության խոսքեր ասացի ստանդարտին: Անկրկնելի բազմազանության սիրահար բանաստեղծական իմ հոգուն միշտ թվացել էր, թե ստանդարտը՝ դա աղքատություն է, միօրինակություն: Նշանավոր գիշեր իմ կյանքում. ես այժմ տեսնում էի, որ ստանդարտը հարստություն է, հզորություն: Ես սարսափով պատկերացրի, թե ի՞նչ կստացվեր, եթե ռազմաճակատում յուրաքանչյուր ավտոմոբիլ լիներ «անկրկնելի», «ինքնատիպ», «տարերային ստեղծագործություն»... Առաջին իսկ գնդակն ինչ-որ ջրի պոմպի վրա կամ առաջին իսկ միոցի մաշվելը շարքից դուրս պիտի հանեին մահացած մեքենան.. .

Բայց ստանդարտը, հրաշագործ Էլիքսիրի նման, վերակենդանացնում էր ավտոմոբիլը: Սարսափելի չէ, եթե այս ընթացքի դրանցից մեկն ու մեկն անկենդան ընկած է ավանից դեպի առաջավոր գիծը տանող ճանապարհին: Առավոտյան, գուցե և հենց հիմա՝ կեսգիշերին, ինչպես պատահում էր երբեմն, կգան մարդիկ ինձ մոտ և կյանք կտանեն շարքից դուրս եկած ավտոմոբիլի համար: Մի ավտոմոբիլի համար կյանքը՝ դա կարդենի պատենատուփն է, մյուսի համար՝ սատելիտները, երրորդի համար՝ պարզապես կայծառը.. .

Քանի դեռ կար այս պահեստը՝ ճարպկորեն քողարկված, քանի չէր ռմբակոծվել, վիրավորված ավտոմոբիլներն առաջավոր գծի վրա մահ չունեին: Նրանք անմահ էին ստանդարտի շնորհիվ, այս պահեստի միջոցով, որի պահեստապետը ես էի.. .

Հանկարծ լավեց խուլ, բայց շատ ուժեղ դրոշոց: Ռմբակոծում էին.. . Նույն պահին իմ լամպի լույսը հանգավ. ես շատ էի առաջացել դեպի պահեստի խորքը, և լամպիս հաղորդալարը, որ հագիվ էր հասնում այդտեղ, ձգվել էր և շտեպսելից անջատվել:

Անթափանց մթնոլորտը պաշարեց ինձ: Իսկ դրսում, այժմ արդեն ավելի մոտ, շարունակվում էր գիշերային կատաղի ռմբակոծությունը.. .

Ես անզուսպ պահանջ զգացի նետվել իմ խցիկը, գտնվել լույսի մոտ, դարպասից ոչ հեռու: Շտապ նետվեցի առաջ, բայց ո՞րն էր առաջը: Իմ առջևում դարակների փայտերն էին. իմ դեմքը հավեց ինչ-որ սառը դետալների: Ես նետվեցի մի այլ կողմ, բայց նորից նույնը: Վերևում, առաստաղի տակ, լավեց անձանոթ թռչունի թևերի անհանգիստ շրշյունը: Նա կարծես իմ տազնապած հոգին լիներ, որ ելք էր փնտրում:

Մի քանի քայլ հետո ես դարակների և դետալների արանքով տեսա իմ սենյակի փոքրիկ լուսամուտի լույսը: Ես հասա տեղ, պառկեցի անկողնում և սկսեցի ունկնդրել դաժան, անմարդկային ռմբակոծության հնչյունները: Զգիտեմ, թե է՞րբ դադարեց այն և է՞րբ ես քնեցի:

4

Հետևյալ օրը, մինչև կեսօր, ես անհամբեր սպասում էի Ռոզային՝ չունենալով ոչ մի վստահություն, թե նա կգա: Եվ իրոք, նա չեկավ: Իսկ ես անպայման ուզում էի տեսնել նրան, պատմել իմ արտակարգ գիշերվա մասին: Ուստի և որոշեցի ինքս գնալ ավան:

Ես չէի կարող պահեստից բացակայել երկար ժամանակով, բայց երբեմն մի ժամով հեռանում էի՝ որևէ գործով կամ պարզապես առանց գործի ավան գնալու համար: Շատ անգամ դեռ ավանին չհասած, ես ստիպված էի լինում վերադառնալ կես ճանապարհին հանդիպած որևէ շոֆերի հետ: Պատահում էի նույնիսկ, որ ինձ ետ էին դարձնում ոչ թե մի, այլ մի քանի անգամ՝ նախքան ինձ կհաջողվեր հասնել ավան:

Այս անգամ ևս, ես դեռ նոր էի դուրս եկել անտառի ճանապարհից դեպի ավանի բացատը, երբ դիմացից երևաց մի պատանի գինվոր: Բայց մոտենալով ինձ, նա ոչ թե ֆակտուրա ցույց տվեց, այլ հայտնեց, որ մի ժամ հետո ես պետք է ներկայանամ ավանում գտնվող ռազմական իշխանություններին՝ շատ կարևոր գործով:

Ուրեմն ավելի լավ: Ես Ռոզային կգտնեմ ավանում, և եթե նա ժամանակ ունենա, այդ մի ժամը կանցկացնեմ նրա հետ:

Ես և պատանի զինվորը լուռ քայլեցինք կողք կողքի՝ մինչև հասանք ավան, և նա բաժանվեց ինձանից:

Կարծես շարունակելով մեր լռությունը, լուռ էր նաև ավանը, լուռ և հանգիստ: Ոչնչից չէր երևում, թե նա գտնվում էր ռազմաճակատին այնքան մոտիկ: Միհարկանի քարե և փայտե շենքեր ունեցող փողոցներում մարդիկ սակավ էին, և նրանք բոլորն էլ անցնում էին թեև գործնական, բայց հանգիստ քայլերով:

Ես անցա մի պուրակի մոտով: Ծառերի ստվերներում, անշարժ, քարացած, կանգնել էին հինգ-վեց ձիեր և նրանց սանձերից բռնած, նույն անշարժությամբ, կանգնել էին հինգ-վեց մարդ: Նրանք կարծես կենդանի արարածներ չլիներին, այլ խմբաքանդակ:

Շարունակելով ճանապարհը ևս մի քիչ տեղ, հատող նեղ փողոցի ծառերի տակ ես դարձյալ տեսա անշարժ քարացածների մի խումբ: Այս անգամ դա մոտ տասը դատարկ ֆուրգոններից բաղկացած սայլաշար էր՝ ձիեր լծած և վրան մարդիկ նստած մտրակները ձեռքներին:

Ավանի զանազան մասերում, օդից աննկատ մնալու համար, ծառերի կամ պատերի ստվերներում թաքնված, կանգնել էին քարացած ձիավորներ և ֆուրգոններ:

Ոչ մի աղմուկ, ոչ մի թնդանոթածգություն կամ ռմբակոծություն այնպես զգացնել չէր տա առաջավոր զծի մոտիկությունը, ինչպես այդ լուռ, անշարժ սպասումը: Ճակատը ճեղքված լինելու կամ նահանջի սարսափելի լուրն ամեն վայրկյան կարող էր խախտել քարացման կախարդանքը, և ֆուրգոններն անասելի շառաչով խլացնելով ավանը, կարող էին սլանալ նախապես սահմանված կարգով՝ Եվակուացնելու ավանի բնակչության մնացորդին՝ համարյա բոլորը բանվոր-բանվորուհիներ, որոնք մնացել էին շարունակելու մի կարևոր օբյեկտի անխափան աշխատանքը: Եվ ամեն վայրկյան, շատ ավելի քիչ սարսափելի, բայց նույնպես վտանգ սպառնացող մի լուր այն մասին, թե թշնամին դեսանտ է իջեցրել ավանի շրջակա անտառի այսինչ հատվածում, կարող էր տեղահան անել ժողովրդական աշխարհագրի ձիավորներին՝ չեզոքացնելու և ոչնչացնելու համար դեսանտը:

Ռոզային ես տեսա գարածի առջև՝ իր մեքենայի տակ մեջքի վրա պառկած: Ոչինչ չէր փչացել մեքենայից: Բոլոր շոֆերներին հրամայված էր ամենաուշադիր կերպով ստուգել իրենց մեքենաները և պատրաստ լինել: Ես ակամայից այդ բանը կապեցի ինձ մի ժամ հետո կանչած լինելու հետ:

Ռոզան վերջացրեց իր գործը, դուրս եկավ, լվացվեց, և մենք նստելով կողք կողքի, նրա բեռնատարից ոչ հեռու, խոտի վրա, սկսեցինք գրուցել: Ես, իհարկե, իսկույն սկսեցի պատմել նրան անցած գիշերվա իմ մտքերի և զգացածների մասին: Նա զարմացած աչքերով, կլանված, լսում էր ինձ՝ հայացքը երբեմն դարձնելով դեպի իր ավտոմոբիլը, կարծես նոր էր տեսնում այն՝ ինչպես հարկն է:

Կես ժամի չափ ես պատմում էի ոգևորված, և նա լսում էր կլանված, երբ հանկարծ նա սթափվեց, նայեց իր թևի ժամացույցին: Նա պետք է գնար: Ես բռնեցի նրա թևը, նույնպես նայեցի ժամացույցին, ապա սկսեցի շոյել մեքենայի հետ գործ ունենալուց հետո միշտ մաքուր լվացված նրա ձեռքը:

— Ռոզա, զգույշ եղիր,— ասացի ես կատակի զվարթ տոնով՝ մեղմելու համար իմ անհանգստության իսկական չափը,— և հիշի՛ր շարունակ՝ ավտոմոբիլն ունի պահեստամասեր, իսկ մարդը՝ ոչ:

— Ի՛նչ լավ կլիներ, եթե մարդն ևս ունենար պահեստամասեր,— նույնպես զվարթ տոն բռնելով, բացականչեց Ռոզան,— թևեր, ոտքեր, գլուխ, սիրտ... Ես նախանձում եմ ավտոմոբիլին:

— Պետք չէ, Ռոզա,— շնչացի ես՝ դեռ չիրաժարվելով իմ զվարթ, սեթևեթ տոնից, բայց զգալով, թե ինչպես բոլոր տեսակի տոները խախտող անսահման հուզումը սեղմում է իմ կոկորդը:— Ես քեզ սիրում եմ քո այս ձեռքերով ու ոտքերով, քո այս սրտով: Մեր ունեցածը բավական է մեզ՝ առանց պահեստամասերի: Ոչ թե ուրիշ ձեռքեր ու ոտքեր են հարկավոր մեզ, մեզ հարկավոր է կյանքը դարձնել այնքան կանոնավոր ու բարեկարգ, որ ժամանակից շուտ չմաշվի ոչ մի սիրտ կամ կյարդ, չկոտրվի ոչ մի թև, չկուրանա ոչ մի աչք... Եվ ինչպե՞ս ես դու նախանձում ավտոմոբիլին, Ռոզա:

Յուրաքանչյուր ավտոմոբիլ կմեռներ երջանկությունից, եթե գոնե մի ժամով կենդանանար, դառնար մարդ, նայեր իր շուրջը, տեսներ արևն ու աշխարհը, զգար, սիրեր, ատեր, պայքարեր և ստեղծագործեր... Այդ բոլորը տրված է մարդուն, Ռոզա, տրված է ինձ քեզ: Իսկ մահը...

Ես կանգ առա մի պահ: Պատերազմի արհավիրքների օրերին չափազանց ծանր էր արտասանել այդ բառը՝ ինչ առիթով էլ լիներ դա:

— Իսկ մահը,— շարունակեցի ես՝ ճիգ անելով ինձ վրա,— դա մեր անհատականացման վարձն է. դա սքանչելի է ասված: Ավտոմոբիլի բոլոր մասերը փոխելի են այն աստիճան, որ ամբողջը կարելի է մաս առ մաս վերածել փաստորեն ուրիշ ավտոմոբիլի: Ավտոմոբիլը դրանով դառնում է անմահ, բայց նա այլևս ինքը չէ, նա ուրիշն է... Դու բիոլոգիայից որևէ բան գիտե՞ս, Ռոզա...

— Գիտեմ,— շնչաց նա մտածկոտ:

— Ուրեմն վերցնենք մի օրինակ նաև բիոլոգիայից: Միաբջիջ օրգանիզմները նույնպես անմահ են, Ռոզա: Հավիտենապես կիսվելով-բաժանվելով, նրանք գոյացնում են նոր օրգանիզմներ: Բայց ո՞ւր մնաց նախնական բջիջի անհատը: Նա բաժան-բաժան եղավ իր սերունդների մեջ: Միաբջիջ օրգանիզմի անմահության մեջ մեռնում են անհատները, անհատ չկա...

Եվ արդեն բոլորովին տխուր, ես ավարտեցի.

— Այն բանի համար, որ մենք անշունչ ավտոմոբիլներ չենք, այն բանի համար, որ մենք միաբջիջ էակներ չենք, որ մենք մարդ ենք, տեսնում ենք և գիտակցում աշխարհը, մտածում ենք և սիրում մենք պետք է մեռնենք, Ռոզա... Մահը մեր անհատականացման վարձն է... Թանկ վարձ է դա, բայց ինչե՞ր ենք մենք ձեռք բերում դրանով...

Բայց շուտով ես և Ռոզան պետք է բաժանվեինք: Չէր կարելի այդպես վերջացնել: Ուստի և ես ավելացրի.

— Կարևորն այն չէ, որ մենք վերջ ի վերջո մեռնելու ենք, Ռոզա: Կարևորն այն է, որ լիապես ապրենք մեզ բաժին կյանքը, որ մինիմումի հասցնենք մեր անհատական մեքենայի ամորտիզացիան, իսկ մեռնելիս, աշխատանքի մեջ մեռնենք արժանավորի, իսկ կռվի մեջ՝ հերոսի մահով... Այդ դեպքում մենք կլինենք անմահ, մեզ կշարունակեն կենդանի մնացած մարդիկ...

Ռոզան գլխակախ լսում էր ինձ, և ես զգում էի, որ նա համաձայն էր ինձ հետ: Ավտոմոբիլի նկատմամբ նրա նախանձի հանկարծակի խոսքը նախազգացումից չէ՞ր արդյոք, որ շուտով ինքը գոյություն չէր ունենալու, միևնույն ժամանակ նրա բեռնատար ավտոմոբիլը շարունակելու էր իր մեքենայական գոյությունը... Եվ դարձյալ, հավետ բաժանվելու նախազգացումից չէ՞ր արդյոք, որ միմյանց հրաժեշտ տալիս մենք, դեռ առաջին համբույրն իրար չտված, տվեցինք մեր տխուր, երկար, վերջանալ չկարողացող վերջին համբույրը, իր անկրկնելիության հաճույքն ու ցավն զգացնել տվող վերջին համբույրը...

5

Այնտեղ, որտեղ կանչել էին ինձ, չասացին ոչ մի ավելորդ խոսք, այլ տվեցին կարտոնե մի մեծ արկղով լի էլեկտրական խոշոր լամպեր, մի քանի տասնյակ մետր հաղորդալար, անհրաժեշտ պարագաներ, և հրամայեցին վերադառնալ և իսկույն լույս անցկացնել պահեստի բոլոր մասերում...

Ի՞նչ տոնախմբություն էին պատրաստվում կատարել իմ պահեստում... Ես հարցական նայեցի նրանց փակ դեմքերին, ոչինչ չհարցրի և վերցնելով արկղը, հաղորդալարն ու այլ պարագաները, վերադարձա պահեստ: Մի քանի ժամ շարունակ, երկար սանդուղքը տեղից տեղ փոխադրելով և կոթավոր լամպով շուրջս լուսավորելով, ես ձեղունի քառակողմ գերանների վրա և պատերի վրա ամրացնում էի հաղորդալարեր և կախում լամպեր:

Երբ վերջապես ամեն ինչ պատրաստ էր և ես ստուգելու համար միացրի հաստիչը, իմ մուկ պահեստը ողողվեց այնպիսի շլացուցիչ լույսով, որ կարծես առաստաղը մի կողմ թռավ և վերևից պահեստ ներխուժեց արևոտ ցերեկը: Բոլոր դարակները՝ ծայրեծայր և վերևից ներքև, բոլոր

պահեստամասերը, նույնիսկ ամենափոքրերը, միանգամից դարձան տեսանելի: Յուրոտ թափանիվները փայլեցին պղտոր, քսմաված փայլով: Պահեստի առջևամասում մարդատար ավտոմոբիլի սրճագույն մի թև դարձավ կակաոյի գույնի:

Իմ սիրելի պահեստամասեր... Պատերազմի այս ահեղ օրերին, երբ թանկ է ամեն մի կիրովատ-ժամ էլեկտրաէներգիան, երբ իմաստով լի է ռազմական ամեն մի հրաման, իհարկե, իզուր չէ, որ ձեզ լուսավորել են այդպես շլացուցիչ: Ես դեռ չգիտեմ, թե ինչո՞ւ համար, բայց գիտեմ, որ իզուր չէ...

Ես անջատեցի հատիչը: Պահեստը կուրացավ: Համատարած մթության մեջ վառվում էր միայն իմ հավատարիմ, կոթավոր լամպը...

Երեկոյան կողմ, անսպասելիորեն, պահեստ լցվեցին մի քանի տասնյակ շոֆերներ ու մեխանիկներ՝ ծանոթ և անծանոթ: Հրամայված էր մոնտաժել իմ պահեստի պահեստամասերը, դարձնել ավտոմոբիլներ: Հրաման էր ստացված՝ լուսաբացին անցնել ընդհանուր հարձակման՝ ետ շարտելու համար ավելի և ավելի կտրիացող թշնամուն: Մոբիլիզացված էին բոլոր մեքենաները, հարկավոր էր թեկուզև գետնի տակից գտնել էլի ուրիշները: Եվ ահա, առաջին հերթին հիշել էին, իհարկե, պահեստամասերը:

Իմ սիրտը թունդ ելավ ուրախությունից: Շոֆերները, մեխանիկներն ու ես, ինչպես գյուտարարների, կոնստրուկտորների, ինժեներների՝ մարդկային հանճարի գործակատարներ, ի մի էինք հավաքելու մետաղի և այլ նյութերի հազարավոր տեսակի, չափի ու ձևի կտորտանքները, որպեսզի տասնամյակներով մշակված և վերջ ի վերջո սահմանված որոշակի կարգով կազմեինք դրանցից ավտոմոբիլներ: Իմ պահեստի պահեստամասերը, իրար միացած և իմաստավորված, դուրս էին գալու դեպի աշխարհ՝ մասնակցելու հաղթանակի մեծ գործին...

Պահեստի ազատ առջևամասում, որտեղ չկային դարակներ, մենք իսկույն դրեցինք մի քանի ավտոմոբիլների հիմքը: Փոխադրելով դետալներն ուրիշ տեղ, մենք քանդեցինք դարակների մի մասը և բացված տարածության վրա դրեցինք էլի մի քանի ավտոմոբիլների հիմքը: Մարդատար և ապրանքատար մեքենաների շրջանակները, մերկ կմախքների նման, սկսեցին հագնել դետալների միսը, խողովակների ու հաղորդալարերի երակներն ու ջղերը, մոտորների սիրտը, կամրջակների, լիսեռների, զսպանակների ողնաշարերը, կողոսկրները, աղիքները, դռնակների և թևերի մաշկը... Շլացուցիչ լույսի տակ մի քանի տասնյակ մարդիկ, լուռ ու կենտրոնացած, ինքնավստահ և շտապ, կատարում էին իրենց գործը:

Ռոզան չկար եկածների մեջ: Նա, ուրիշ շոֆերների հետ միասին, ամբողջ գիշերը ռազմամթերք էր փոխադրելու առաջավոր գիծ: Բայց ես տխուր չէի, որովհետև բանային ձեռքիս, ես նույնպես մոնտաժում էի մի ավտոմոբիլ, որի վրա ինքս էի նստելու մի փորձված շոֆերի հետ և մեկնելու էի ռազմաճակատ, որտեղ և անշուշտ հանդիպելու էի Ռոզային...

Մենք ողջ գիշերն աշխատեցինք անդու՛ վաղ լուսաբացին ավտոմոբիլները հասցնելու համար: Գիշերվա ընթացքում մի քանի անգամ լավեց օդային տազնապ, մի քանի անգամ բացվեց ռմբակոծությունների դժոխքը: Ռումբերն ընկնում էին չափազանց մոտիկ, գլխավորապես ավանի կողմում: Բայց, չնայած ռմբակոծություններին, կանոնավորապես, յուրաքանչյուր ժամը մեկ, ավանից գալիս էին իմանալու, թե ինչ ընթացքի մեջ է մոնտաժը: Մի անգամ եկան և նախազգուշացրին, որ, համենայն դեպս, հսկենք բենզինի տակառները, որովհետև շատ մոտիկում այրվում է անտառը: Սակայն հրդեհը հանգրից և նախապատրաստության գիշերը նորից կորավ մթության մեջ:

Վաղ լուսաբացին, սահմանված ժամից ավելի վաղ, ինչպես այդ ընդունված է աշխատանքի հերոսներով հարուստ մեր երկրում, պահեստի դարպասից դուրս ելան մեր ավտոմոբիլները և ուղևորվեցին դեպի ավան: Ետևում մնաց դատարկ պահեստը՝ բենզինի դատարկ տակառներով, դատարկ դարակների վրա պահեստամասերի յուրոտ հետքերով և մի քանի տասնյակ մանր ու մեծ ավելցուկներով, որոնք մնում են ամեն մի գործ ավարտելուց հետո: Ես հանգրի լույսը, հրաժեշտ տվեցի իմ փոքրիկ սենյակին, փակեցի պահեստը և առաջին անգամ իմ կյանքում, փորձված շոֆերի հսկողության տակ, բռնեցի ավտոմեքենայի դեկը:

Ավանում ինձ սպասում էր սոսկալի մի լուր. Ռոզան այլևս չկար...

Ռոզան ընկել էր հերոսի մահով՝ դեպի առաջավոր գիծը գնեք փոխադրելիս: Այն շոֆերը, որը պատմեց ինձ այդ մասին, գիտե՞նալով, թե ո՛վ էր Ռոզան ինձ համար, ավելացրեց.

— Գնդակը կպավ նրա ճակատի աջ անկյունին, համարյա քունքին և թողեց փոքրիկ, շատ փոքրիկ անցք, ուղղակի, ինչպես մոծակի խայթվածք. . . Եվ նա պառկած է քնածի պես, ուղղակի քնածի պես. . .

Կարծես այն բանից, որ գնդակի անցքը շատ փոքր էր կամ նա քնածի պես էր, նրա մահը դառնում էր պակաս ծանր, պակաս ողբերգական. . .

Էհ, Ռոզա, Ռոզա... Հատուցում պահանջող ընկած հերոսների, սպանված ծերունիների, երեխաների, կանանց անհաշիվ թվին ավելացար նաև դու... . Ուրեմն ես այլևս երբեք չեմ տեսնելու քեզ, Ռոզա. . .

Եվ վար ցատկեցի իմ կանաչ բեռնատարից և նրա ռադիատորի, կափարիչի, կաբինի ճակատի, թափքի կողերի վրա կավիճով գրեցի՝ Ռոզա, այսինքն՝ վարդ... . Աշխարհում դեռ ոչ ոք չէր տեսել այդպիսի վարդ՝ բացված Հայրենական արդար պատերազմի արյունոտ հողի վրա. . .

6

Մեր ճակատամասի կատաղի հարձակումը տևեց երեք օր: Երեք օրվա ընթացքում մենք հրով ու սրով անցանք շատ և շատ տասնյակ կիլոմետրեր՝ ճանապարհին սրբելով մեզ դիմադրող ամեն բան: Մեր անզուսպ գրոհի մեջ իրար էին ձուլվել մարդիկ ու տեխնիկան, վրեժն ու հայրենասիրությունը, սերն ու ատելությունը, անձնագրահոլությունն ու չզոհվելու, անպայման հաղթանակելու վճռականությունը: Երբ, այնուամենայնիվ, ընկնում էին մեր մարդիկ, նրանց փոխարինում էր նրանց ընկերների կրկնապատկված կատաղությունը: Իսկ երբ խփվում էին ավտոմոբիլներն ու կանգ առնում, ապա դրանք փոխադարձաբար լրացնում էին իրար և շարունակում գնալ առաջ՝ ետևում թողնելով միայն անպետքացած դետալներ մեծ ու փոքր կույտեր:

Երրորդ օրվա երեկոյան, առաջադրանքն արդեն կատարված էր, և մենք վերադարձանք ավան, որտեղ այլևս չէր լսվում և երբեք չէր լսվելու ո՛չ մի ռումբի պայթյուն, ո՛չ մի թնդանոթի որոտ. . .

Իմ պահեստի մեքենաներից մնացել էին մի քանիսը: Գնդակոծված, փոշոտված, աշխատասերտված, նրանք այժմ ստացել էին կենդանի տեսք և որքան որ դա հնարավոր էր մեքենայի համար՝ անհատականություն: Այդպես կենդանանում և անհատականություն են ստանում վաճառանոցից գնված գլխարկը կամ կոշիկները, երբ դրանք գործածվելով հարմարվում են իրենց կրողի գլխին, ոտքերին, իրենց մեջ արտացոլում են նրա բնավորության և սովորությունների մասնիկները, նրա կյանքի և ապրելակերպի հետքերը...

Կենդանացել և կենդանի էր մնացել նաև իմ Ռոզան՝ վրեժի համար բացված իմ կանաչ վարդը. . .

Եվ հանկարծ՝ հրաման. . . Տանել բոլոր այդ մեքենաները պահեստ, քանդել և դարսել դարակների վրա: Դրանք ավտոմոբիլներ չեն, այլ ավտոմոբիլային պահեստամասեր, որոնք հարկավոր են ապրող, պայքարող ավտոմոբիլների համար. . .

Իմ սիրտը ցավագին ճմլվեց դժգոհությունից: Բայց ես հրամանից չէի դժգոհ, դա միակ ճիշտ խելացի հրամանն էր, որ կարող էր լինել տվյալ դեպքում: Ես դժգոհ էի, թե ինչո՞ւ է կյանքը դեռ այնքան անհարմար, ինչո՞ւ է դեռ կան այնտեղ պատերազմներ և դարուփոսեր, որտեղ կոտորվում կամ ժամանակից շուտ մաշվում են ավտոմոբիլների դետալները և հարկավոր է դրանց համար ունենալ պահեստամասեր. . . Եվ ես դժգոհ էի նաև այն բանի համար, թե ինչո՞ւ գիտությունը դեռևս այնքան չի կատարելագործել ավտոմոբիլը, այնքան իդեալականորեն չի հարմարեցրել դետալների դիմացկունությունն իրար, որ բոլոր դետալները մաշվեն հավասարապես, նույն ժամանակամիջոցում, որպեսզի ավտոմոբիլը, ծառայելով շատ երկար, շարքից դուրս գա միանգամից՝ այլևս կարիք չզգալով ոչ մի պահեստամասի. . .

Նորից մի գիշեր, այս անգամ արդեն՝ ոչ ամբողջ գիշերը, շոֆերներն ու մեխանիկները, այս անգամ արդեն՝ ոչ թե մի քանի տասնյակ, այլ շատ ավելի քիչ, մասնատեցին, ջլատեցին ավտոմոբիլները՝ դրանք նորից վերածելով հազարավոր և հազարավոր առանձին դետալների:

7

Ես գիտեմ և ամբողջ աշխարհը գիտե, որ մենք Հայրենական մեծ պատերազմը մղեցինք և հաղթանակը տարանք հենց նրա համար, որ հաստատուն պահենք այն կյանքը, որտեղ ամեն ինչ ծնվում է շարունակ ավելի և ավելի ներդաշնակ, ապրում է ավելի ու ավելի ներդաշնակ: Այժմ, երբ անցյալ է դարձել այդ պատերազմը, և մենք նորից լծվել ենք խաղաղ աշխատանքի և պաշտպանության, ես նորից ահա, անցած իմ գրական աշխատանքին, գրում եմ և երագում.. .

Ես իմ աչքի առաջ պատկերացնում եմ իր միլիոն կիլոմետրը կատարած ավտոմոբիլի վերջին ռեյսը՝ ինքն իրեն տանելու համար դեպի ուստիլսիոյո: Գնում է ավտոմոբիլը, հասնում է ուստիլսիոյոյի բազայի դարպասին և կանգ է առնում հանկարծ: Մարդիկ վազում հավաքվում են դրա շուրջը:

Ավտոմոբիլն անպետքացել է իր բոլոր մասերով, միանգամից, և այժմ կանգ է առել ավարտված: Ղեկի ետևում նստած, խաղաղ մահացել է ծերունի շոֆերը: Եվ նրա կողքին ընկած է իմ երկրի ժողովածուի քրքրված, կարդալուց անպետքության հասած մի օրինակը՝ վերջին էջի վրա բաց արված.. .

Ավտոմոբիլը հանձնում են ուստիլսիոյո, շոֆերին՝ կրեմատորիա, գրքիս օրինակը՝ մակուլատուրա:

Իսկ խորհրդային ներդաշնակ կյանքում անընդհատ արտադրվում են նորանոր ավտոմոբիլներ, սովորում են նորանոր շոֆերներ և տպագրվում են նորանոր գրքեր. . .

1947